



## Լաբորատոր աշխատանք

### ԲՈՒՅՍԻ ԱՃԻ ՎՐԱ ԼՈՒՅՍԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

**Աշխատանքի նպատակը:** Աշխատանքի նպատակը: Փորձով ապացույցել, թե լույսն ինչ ազդեցություն ունի բույսի վրա:

**Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ:** Լոբու և ցորենի սերմեր, պետրիի թասիկներ, քամիչ թուղթ, ջուր և սենյակային բույսեր:

**Աշխատանքի ընթացքը:** Լույսը բույսի համար անհրաժեշտ ամենակարևոր կենսապայմաններից է: Լույսն անհրաժեշտ է քլորոֆիլի առաջացման, ֆոտոսինթեզի, բույսի նորմոլ աճման և ծաղկման, օրգանների և հյուսվածքների տարբերակման համար:

Բազմաթիվ դիտարկումներ և փորձեր կարելի է կատարել բույսի և լույսի կապի վերաբերյալ: Իմասնավորի.

1. Չորս թասիկներում տեղավորեք լոբու, ցորենի կամ այլ բույսի սերմեր: Դրանցում ստեղծեք սերմերի ծլման համար անհրաժեշտ պայմաններ: Թասիկներից երկուսը տեղավորեք լույս պայմաններում, իսկ երկուսը՝ մութ: Տաս-տասներկու օր հետո կնկատեք, որ սերմերը ծլել են: Համեմատեք տարբեր պայմաններում գտնվող սերմերի ծիլերը: Արդյունքում կնկատեք, որ լայսի տակ գտնվող սերմերի ծիլերը կանաչ և լավ տարբերակված օրգաններով են, իսկ մութ պայմաններում գտնվող սերմերի ծիլերը դեղնավուն և վատ տարբերակված օրգաններով են:



2. Դիտեք տան կամ դպրոցի կենդանի անկյունու աճեցրած բույսերի տերևների դիրքը լուսի նկատմամբ: Կնկատեք, որ տերևները թեքված են դեպի լուսը: Ծաղկամաններից մեկը շրջեք այնպես, որ տերևների դիրքը փոխվի՝ թեքված տերևներն ուղղված լինեն լուսի հակառակ ուղղությամբ:



Մի քանի ժամ անց տերևները կրկին կփոխեն իրեց դիրքը՝ կրկին կթեքվեն դեպի լուսը: Այդ փորձը լավ է ստացվում թթվառովայի մոտ:

3. Դիտեք թթվառովայտի տերևների և ծաղկաթերթիկների դիրքի փոփոխությունը վաղ առավոտյան, կեսօրին և ուշ երեկոյան: Կնկարեք, որ դրանք վաղ առավոտյան և ուշ երեկոյան փակ են, իսկ կեսօրին՝ բաց: Նույն որինաչափությունը նկատվում է նաև վարդկակաչի մոտ: Նշված երևույթները դաշտային պայմաններում կարող եք նկատել երեքնուկի տերևների և խատուտիկի ծաղկաբույլի մոտ:

